

ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ Ա. ՍԵՄԱԷՆ

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ Ս...ԻՆ

Կ'անձրեւէ քաղփն վըրայ,
Տըխուր է օրը այնպէ՛ս,
Կը սպասեմ երկար դեռ ես,
Ժամ մըն է եւ ան չըկայ:

Կը խորհիմ, «եբբա՛մ այլեւս,
Ի գուր է, գուցէ չըգա՛յ...
Ո՞վ գիտէ, քըմայք աղջկայ,
Ըստասեմ, կուգայ թերեւս...»

Կ'երեւի ըստուեր մը գորշ
Փողոցի ծայրէն անա՛...
Կը յուսամ որ իմէ կ'ըլլայ,
Մըջուշ է եւ անորշ:

Ըստուերը կուգայ, կ'անցնի,
Կ'ուշանայ ինքը, սակայն.
Օ՛, օրը ցուրտ է ա՛յնքան
Եւ օրը կը ամգունի...:

Ինչ փոյթ,
Կասոյտ
Աչեքներուդ մէջ երկինքն ու զիս ունիք բանտած,
Ու շատ
Շըւայտ
Սեղաններու զիս՝ յսե՛րգն տըզայ՝ կ'տանիք անդարձ:

Աւա՛դ,
Շատ վաղ
Ձեր վարմին մէջ հեզ, բախտաւոր ինկայ ես գոհ,
Եւ գուր
Այլուր
Կ'ուզեմ փայլչիլ, ձերն եմ, գիտէք, վստահ ու գոհ:

Փորձել
Անել
Այս ուրիշն ետ դառնալ, արդ, օ՛, շատ ուշ է,
Ու գուր
Տըխուր
Ձանգ մ'հեռաւոր կորըւած պտեմ ինձ կը յուշէ:

Փարեկ, 1929

Ա. ՍԵՄԱ
(Գեղամ Աթմաճեան)

ՓՈԹՈՐԻԿ

Պարմանուհի՛, եւ դու պարմա՛ն սիրահար,
Ըստանալից փոթորիկն է վերահաս,
Անցէ առաջ ու վազեցէք անդադար,
Ոչ մէկ արեւ կրնայ լուծել ամպերն այս:

Վերադարձի կամուրջներն չին փուլ եկան.
Հետապնդող փոթորիկն է խիստ անդուժ.
Բազկատարած վազեցէք դուք Այսօրուան,
Վաղուան խոստումն աւանդական՝ սուտ է, սուտ...

Լօս Էմմըլլա

ՎԱՀՐԱՄ ՍՕՖԵԱՆ